Հավելված N 2
2025 թվականի հունվարի «15»-ին կնքված
«1032-11002/2025-ԵՀ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2025-ԵՀ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հույս տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025-31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025-30.09.2025 |
| Ներկայացման օր | 09.10.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Լենա Հայրապետյան, Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

*Գործողություն 1*
Կկատարվի ՄՄԾ տարածքային կենտրոնների կողմից ուղեգրված շահառուների անհատական կարիքների գնահատում և կկնքվեն գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրեր:

*Գործողություն 2*
Յուրաքանչյուր շահառուի համար կկազմվի անհատական սոցիալական ծրագիր և այցելությունների գրաֆիկ:

*Գործողություն 3*
Կկազմակերպվի խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ կենցաղային սպասարկում
- ✓ բժշկական օգնություն և սպասարկում
- ✓ սոցիալ-հոգեբանական օգնություն
- ✓ խորհրդատվական աջակցություն

*Գործողություն 4*
Ըստ շահառուների նախասիրությունների, կկազմակերպվեն տարաբնույթ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ էքսկուրսիաներ՝ ապահովելով շահառուների առնվազն 80 տոկոսի մասնակցությունը:

*Գործողություն 5*
Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը կներկայացվեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3.

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակում նախատեսված գործողություններից իրականացվել են հետևյալները.

***<u>Գործողություն 1</u>***

2.1. Ծրագրի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է ՄՍԾ տարածքային կենտրոնների կողմից ուղեգրված շահառուների (Հավելված 1) անհատական կարիքների գնահատում (Հավելված 2):

2.2. Իրականացվել է շահառուների անձնական տվյալների ներմուծում համապատասխան համակարգ, որը նախատեսված չի եղել աշխատանքային պլանով:

***<u>Գործողություն 2</u>***

Նոր շահառուների համար կազմվել է անհատական սոցիալական ծրագիր (Հավելված 3) ինչպես նաև սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ կողմից կատարվելիք պարբերական այցելությունների գրաֆիկ (Հավելված 4):

***<u>Գործողություն 3</u>***

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական սպասարկողները ապահովել են շահառուների կենցաղային սպասարկումը՝ ներառյալ անձնական հիգիենայի պահպանումը, բնակարանի մաքրությունը, անհրաժեշտության դեպքում լոգանքի կազմակերպումը, գնումների կատարումը, կոմունալ վճարների մուծումը: Սոցիալական սպասարկողները շահառուներին անհրաժեշտության դեպքում ուղեկցել են բժշկական հաստատություն, առևտրի կենտրոններ: Բացի այդ, սոցիալական սպասարկողները կատարել են համապատասխան գրառումներ շահառուների անհատական ծրագրերում՝ արձանագրելով նրանց վիճակի փոփոխությունները և մատուցված ծառայությունները (Հավելված 5):

Բուժքույրը ապահովել է շահառուների բժշկական կարիքների սպասարկումը՝ իրականացնելով բժշկի նշանակումների կատարումը, դեղերի տրամադրումը: Նա համակարգել է շահառուների այցերը պոլիկլինիկա, անհրաժեշտության դեպքում ուղեկցել նրանց այլ բժշկական հաստատություններ և հետևել նրանց առողջական վիճակի փոփոխություններին:

Սոցիալական աշխատողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է շահառուների սոցիալական կարիքների գնահատում, ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում:

Շահառուներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն՝ ինչպես ծրագրի բովանդակության, այնպես էլ իրենց իրավունքների վերաբերյալ: Նա շահառուներին իրազեկել է պետական աջակցության տարբեր միջոցառումների, դրանցից օգտվելու հնարավորությունների, ինչպես նաև համապատասխան ծառայությունների հասանելիության վերաբերյալ:

***<u>Գործողություն 5</u>***

Հնարավոր կազմակերպվելիք միջոցառում/էքսկուրսիաների վերաբերյալ, շահառուների քանակի և հետաքրքրության հստակեցման համար կազմվել է ձևաթուղթ (Հավելված 6): Արդյունքերից պարզ է դարձել, որ շահառուների մեծ մասն առողջական և տեղաշարժման խնդիրներով պայմանավորված չեն ցանկանում մասնակցել նախատեսված միջոցառում/էքսկուրսիային:

***<u>Գործողություն 6</u>***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացվել են ամսական ֆինանսական հաշվետվությունները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

2.4. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Ծրագրի գործողությունների իրականացման ընթացքում խոչընդոտներ չեն գրանցվել:

2.5. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

***Գործողություն 1***

Կկատարվի ՄՍԾ տարածքային կենտրոնների կողմից ուղեգրված շահառուների անհատական կարիքների գնահատում և կկնքվեն շահառուների գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրեր:

***Գործողություն 2***

Յուրաքանչյուր շահառուի համար կկազմվի անհատական սոցիալական ծրագիր և այցելությունների գրաֆիկ:

***Գործողություն 3***

Կկազմակերպվի խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ **կենցաղային սպասարկում**
- ✓ **բժշկական օգնություն և սպասարկում**
- ✓ **սոցիալ-հոգեբանական օգնություն**
- ✓ **խորհրդատվական աջակցություն**

***Գործողություն 4***

Ըստ շահառուների նախասիրությունների, կկազմակերպվեն տարաբնույթ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ էքսկուրսիաներ՝ ապահովելով շահառուների առնվազն 80 տոկոսի մասնակցությունը:

***Գործողություն 5***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը կներկայացվեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ

տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 23/24 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 17 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 22 |
| 1.4 | այդ թվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված | 3 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 2<br>Բ - 22 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 24 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 24 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 24 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 0 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 24 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |

Հիմնադրամի տնօրեն՝ «09». 10.2025թ.